


Հ Ր Ա Զ Տ Ա Ն Ե Ր Ս Ի Ս Յ Ա Ն
(1895—1961)



Նոյեմբերի 6-ին, երկուշաբթի, Երևանի իր բնակրանում, երկարատև և ծանր հիվանդությունից հետո վախճանվեց Հայ բեմի շնորհալի արքան, ՍՍՌՄ ժողովրդական արտիստ, Հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, դերասան Հրաչյա Ներսիսյանը:

Հայ թատրոնն ու կինոարվեստը ունեցան մեծ և անփոխարինելի կորուստ:

Հրաչյա Ներսիսյանը ծնվել է 1895 թվականին Նիկոմիդիայում, Կոստանդնուպոլիսի մոտ: Բեմի սերը նրան երիտասարդ Հասակում մղում է դեպի թատրոն:

1922 թվականին Հրաչյա Ներսիսյանը իր ստքերից ընդմիշտ թոթափում է պանդիսու-

թյան փողին, վերադառնում է Հայրենիք և համարձակորեն ոտք գնում վերածնված Հայրենի հողում հայ բեմի վրա և այնուհետև տարվում է բեմական արվեստով և ընդմիշտ նվիրվում է հայ բեմին:

Հրաչյա Ներսիսյանը հայ բեմի մեծատաղնող վարպետների հույսի մեջ, Արդամյանի, Սիրանուշի, Արելյանի, Փափազյանի կողքին իր առանձնահատուկ տեղն ունի:

Հայ բեմի սքանչելի վարպետը անցել է «Լայն, բազմակողմանի և փառավոր ճանապարհ», Մոտ քառասուն տարի հայ բեմի վրա փայլատակել է նրա մարդկային կենսահաստատ արվեստը, այնտեղ նա բարձրացել և իր հետ սարձրացրել է թատրոնը և դարձել բեմի սքանչելի վարպետ»:

Հուժկու բեմական տաղանդի տեր, առինքնող, վերացնող, ոգեշնչող արվեստագետ էր նա: Հայ թատրոնի պատմության մեջ անմոռանալի պիտի մնան նրա ստեղծած բեմական կերպարները անզուգական դերակատարմամբ—Օթելո, Ֆալստաֆ, Թերսենև, Ժադով, Պլատոն Կրեչետ, Էլիզարով, Պաղտասար աղբար, Գնորդ Մարզպետունի, Վահրամ Փահլավունի, Դավիթ-Թեկ, Ռուստամ, Պետր, Մեք-Գրեգորի և ուրիշ շատեր:

Հրաչյա Ներսիսյանը 40 տարի իր բացառիկ տաղանդով նվիրվել է թատրոնին:

Մեծատաղանդ վարպետը արժանացել էր պետական բարձր շքանշանների: Նա չերմ, Հայրենասեր, Հիանալի մարդ էր, սիրող ու համեստ ընկեր, ազնիվ բարեկամ:

Հայրենի կառավարությունը նրա կուրծքը զարդարել էր Լենինի և Պատվո նշան շքանշաններով ու մեղալներով և նրան շնորհել ՍՍՌՄ ժողովրդական արտիստի կոչում:

Հրաչյա Ներսիսյանի թաղումը կատարվեց նոյեմբերի 10-ին: Մեծ դերասանի աճյունը ամփոփվեց Քաղաքային պանթեոնում, Կոմիտասի անվան զրուայգում:

Փա՛ռք նրա հիշատակին:

Մեծ արվեստագետի անունն ու հիշատակը հավետ կապրեն հայ ժողովրդի սրտում:

